

Դպրոցականների առարկայական օլիմպիադա

Մարզային փուլ

Հայ գրականություն-2018

/տևողությունը – 150 րոպե/

10-րդ դասարան

1. Ի՞նչ է թարգմանական գրականությունը: Ովքե՞ր են առաջին թարգմանիչները: Ի՞նչ գրքեր են թարգմանվել. ո՞ր թարգմանությունն է համարվում լավագույնը և ի՞նչ պատվանվան է արժանացել: 4մ.
2. Ի՞նչ պատմական հանգամանքներում է ստեղծվել հայոց գիրը. ո՞րն է հայ գրի անբեկանելի դերը: Ի՞նչ շրջասույթներ գիտես հայ գրի արարչի մասին: Ովքե՞ր են անդրադարձել նրա կերպարին: Հիշատակի՞ր Մաշտոցին բնութագրող 1-2 քառատող՝ ըստ հեղինակների: 4մ.
3. Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն» երկը. ո՞վ է պատվիրատուն. ի՞նչ հանգամանքներում է ստեղծվել: Վերլուծի՞ր «Ողբը»՝ գրելով 3-4 բնագրային տող: 4մ.
4. Ե՞րբ է ստեղծվել «Սասնա ծռեր» էպոսը: Ովքե՞ր են առաջին անգամ հիշատակել էպոսի մասին: Բնութագրի՞ր Ծովինարին՝ հարազատ մնալով էպոսի լեզվին: Ո՞ր առասպելի տարրերից կան էպոսում: 4մ.
5. Ո՞վ է ասույթի հեղինակը. «Չիք իմ այլ նպատակ առաջի, եթե ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենյաց մեռանիլ»>: Իրականացա՞վ արդյոք հեղինակի երազանքը. եթե՝ այո, ապա հիմնավորի՞ր կարծիքդ: 4մ.